ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2022թ. N ------ - Ա

## ՈՐՈՇՈՒՄ

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 10-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումը.

1) Որոշման N 2 հավելվածում՝

ա. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ֆինանսական վարչություն» գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.2 կետով,

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1.2 | վարչության պետի տեղակալ-գլխավոր հաշվապահ | 1 | 561,000 | | 561,000 |

բ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ֆինանսական վարչություն» գլխի 4-րդ կետի «բաժնի պետ-գլխավոր հաշվապահ» բառերը փոխարինել «բաժնի պետ» բառերով ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողում «36» և «11,968,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «37» և «12,529,000» թվերով,

գ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ամբողջը՝ Երևանի քաղաքապետարանում» տողի «702.5» և «232,033,800» թվերը փոխարինել համապատասխանաբար «703.5» և «232,594,800» թվերով,

դ. «Ամբողջը» տողում «1992.5» և «605,126,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «1993.5» և «605,687,000» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
# «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Երևանի քաղաքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով.

Առաջիկայում նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի ֆինանսների բնագավառում որոշակի համակարգային փոփոխություններ, մասնավորապես, նախատեսվում է ապահովել հանրային հատվածի ստանդարտներին համապատասխան ավելի լայն գործիքակազմի կիրառումը, որի իրականացումը կբերի համայնքապատկան գույքի առավել լայն վերահսկողության, ինչպես նաև կբարձրացնի համայնքի հաշվետվողականության մակարդակը, որի արդյունքում Երևանը առավել գրավիչ կդառնա՝ միջազգային գործընկերների և կապիտալ ներդրումների իմաստով, ընդ որում նշված գործառույթները իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ Երևանը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ամենախոշոր համայնքը, այդ թվում՝ ակտիվների մասով, և վերոնշյալ ֆինանսական միջոցառումների իրականացումը ենթադրելու է բավականին մեծ աշխատանք, որն իր հետ նաև ավելացնում է լրացուցիչ աշխատուժի պահանջարկը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է աշխատակազմի ֆինանսական վարչության հաստիքային միավորները ավելացնել աշխատակազմի ֆինանսական վարչության պետի տեղակալ-գլխավոր հաշվապահ հաստիքով, որը կկոորդինացնի վերոնշյալ միջոցառումների իրականացումը, միաժամանակ հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների բաժնի պետ-գլխավոր հաշվապահ հաստիքը վերանվանելով հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների բաժնի պետի անվանումով:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման Նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում ծախսերի էական փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ